Արձանագրություն N 3

«ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-18/03» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի

հանձնաժողովի նիստի

ք. Երևան 14 օգոստոսի 2018թ. ժ. 15:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Դ.Ավետիսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Է.Պետրոսյան, Ա.Հայրապետյան, Հ.Հովհաննիսյան, Ա.Եփրիկյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Մանուչարյան

1. **«ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-18/03» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի՝ հրավերով սահմանված մասնակցի ներկայացրած փաստաթղթերի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման արդյունքները.**

1.1 ՀՀ Կառավարության թիվ 526 Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետին համապատասխան՝ Կոմիտեի կողմից ստացվել է հարցման մասին տեղեկատվություն, որի արդյունքում պարզվել է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ «Տիգրան Մեծ հրատարակչություն» ՓԲԸ-ն, չունի ժամկետանց հարկային պարտավորություններ, ինչպես նաև բավարարում է «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանները:

1.2 Գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստից հետո էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է վերոնշյալ փաստաթղթերը, որոնք համապատասխանում էին սահմանված պահանջներին:

Հիմք ընդունելով 1.1 և 1.2 կետերը՝ գնահատող հանձնաժողովը բավարար է գնահատում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

2.Պայմանագիր կնքելու որոշում

Գնահատող հանձնաժողովի 2018 թվականի օգոստոսի 14-ի թիվ 2 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները: Համաձայն որի՝

Չափաբաժին 1-«Երևան» ատլասի տպագրման աշխատանքներ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր /համապատասխանելու դեպքում նշել "X"/	Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր /չհամապատասխանելու դեպքում նշել "X"/	Անհամապատասխանության համառոտ նկարագրություն
1	**«Տիգրան Մեծ հրատարակչություն» ՓԲԸ**	X		
2	**«Հայկարլի» ՍՊԸ**	X		

Մասնակիցների զբաղեցրած տեղերը	Մասնակցի անվանումը	Ընտրված մասնակից /ընտրված մասնակցի համար նշել "X"/	Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ, հազ. դրամ,/
1	**«Տիգրան Մեծ հրատարակչություն» ՓԲԸ**	X	1616.5
2	**«Հայկարլի» ՍՊԸ**		4503.94

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից նվազագույն գին առաջարկած մասնակցին նախապատվություն տալու սկզբունք:

"Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-18/03 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Լ.Մանուչարյանին:

Հեռախոս՝ 060 47 41 42:
Էլեկտրանային փոստ՝ gnumner@cadastre.am:
Պատվիրատու՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի՝
Նախագահ՝ _____ Դ.Ավետիսյան
Անդամներ՝ _____ Ա.Հայրապետյան
_____ Է.Պետրոսյան
_____ Հ.Հովհաննիսյան
_____ Ա.Եփրիկյան
Քարտուղար՝ _____ Լ.Մանուչարյան